Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
«24» հունվար 2011 թ.
N 03-Ա/Ք հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _Ե/12-12

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «27» հունվարի, 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ ակադ. Մ.Գ.Մանվելյանի անվան Ընդհանուր և Անօրգանական Քիմիայի Ինստիտուտ (ՀՀ ԳԱԱ ԸԱՔԻ)_____-ը, ի դեմս տնօրեն Նիկոլայ Կնյազյան_____-ի
(կազմակերպության անվանումը) (անուն ազգանուն)
(այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ _____
(ծրագրի անվանումը)
ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև __109351.0_դ_____ գումար, իսկ

Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները.

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. ՀՀ ԳԱԱ կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց.

2.2.4. ՀՀ ԳԱԱ գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը.

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ.

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում.

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ.

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ.

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ՝ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ.

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.10. ՀՀ ԳԱԱ կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ ՀՀ ԳԱԱ կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է _109351.0 (հարյուր ինը միլիոն երեք հարյուր հիսունմեկ հազար) ՀՀ դրամ:
(թվերով և բառերով)

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև (100602.920) մեկ հարյուր միլիոն վեց հարյուր երկու հազար ինը հարյուր քսան ՀՀ դրամ,
(թվերով և բառերով)

որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ.

1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գումարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից

ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

Արարատ բանկ ԲԲՀ/հ 1510005175820100
ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

(ստորագրություն)

Կ. Տ.

Ընդհանուր և Անօրգանական Քիմիայի Ինստիտուտ
(կազմակերպության անվանումը)

Արգության փ. 10, 2-րդ նրբ
(հասցեն)

հ/հ 247120046385 ԱՇԻԲ
(բանկային վավերապայմանը)

Տնօրեն՝ Ն. Կնյազյան
(անուն ազգանուն)

(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 1
«27» 01 2015 թ.
N _ե/152 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ _____ ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե
2. Աշխատանքի նպատակը

1. Ֆունկցիոնալ նշանակության նոր նյութերի սինթեզը, հատկությունների ուսումնասիրությունը և շահավետ տեխնոլոգիաների մշակումը:

2. Նանոչափի նյութերի և դրանց հիմքով նանոկոմպոզիտների ստացումը և ուսումնասիրությունը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում) Աշխատանքը կատարվելու է ըստ օրացուցային պլանի և նշված ժամկետներում կներկայացվեն հաշվետվություններ: Եթե որևէ աշխատանք ըստ օրացուցային պլանի չի կատարվում օբյեկտիվ պատճառներով, ապա անհրաժեշտ է տեղեկացնել պատվիրատուին՝ հիմնավորելով այն: Այս դեպքում չկատարված աշխատանքը անհրաժեշտ է փոխարինել ընդհանուր խնդրի հետ տրամաբանորեն կապված նույն ծավալով մեկ այլ փուլի
4. Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում)

Հանրապետության տնտեսության զարգացման համար նոր հատկություններ ունեցող նյութերի, նանոչափ մասնիկների, դրանց հիման վրա կոմպոզիտների ստացում և տեխնոլոգիաների մշակում:

- Ալյումին պարունակող տեղական հումքից, արտադրական թափոններից և տեխնիկական արգնահողից հատուկ մաքրության ալյումինի հիդրոքսիդի և օքսիդի

ստացման ֆիզիկա-քիմիական հիմունքների ուսումնասիրություն և տեխնոլոգիաների մշակում:

• Սուլֆիդային հանքանյութից հիդրոմետալուրգիական եղանակով պղնձի, երկաթի և այլ մետաղների խտանյութերի ստացման նոր տեխնոլոգիաների մշակում:

• Եռավալենտ մետաղների վոլֆրամային պոլիօքսիմետաղների β-միջուկների սինթեզ, հատկությունների ուսումնասիրություն և ժամանակակից տեխնոլոգիաներում դրանց կիրառման հեռանկարների բացահայտում:

• Նանոչափի նյութերի, ֆունկցիոնալ նշանակության ամորֆ և բյուրեղային կառուցվածքով նոր բաղադրության նանոկոմպոզիտների ստացման պայմանների, կիրառման բնագավառների հետազոտում:

• Նոր տիպի արեգակնային քալկոգենիդային կիսահաղորդիչով ֆոտոէլեկտրաքիմիական կերպափո-խիչի (ՖԷԿ) մշակում:

• Հայաստանի լեռնային ապարների կիրառումը անընդհատ հանքային մանրաթելերի արտադրության մեջ: Ջերմա-մեխանիկական բարձր պարամետրերով կոմպոզիտների ստացում հանքային մանրաթելերի հիմքքով:

• Օքսիհալոգենիդային համակարգերի հիմքով նոր բաղադրության, էլեկտրական և օպտիկական հատկությունների փոփոխության լայն տիրույթով ապակիների, ապակեկերպ նյութերի սինթեզ և տեխնոլոգիաների մշակում:

• Սերպենտինացված ապարների քիմիական մշակման կատարելագործում և ստացված նյութերի հիման վրա ֆունկցիոնալ նշանակության միացությունների սինթեզ:

• Գերկարծր, քիմիապես կայուն ծածկույթների ստացման մեխանաքիմիական եղանակի մշակում՝ մետաղական և ոչ մետաղական մակերեսների վրա.

• Դիոպսիդային և մուլիտային կառուցվածքի, բարձր ջերմաստիճաններում գույների մեծ ինտենսիվությամբ, կերամիկական պիգմենտների ստացում ոչ հանքային լեռնային ապարների միկրոալիքային մշակման եղանակով:

• Զոլ-ժել եղանակով կոմպոզիտային խեցեղենային նյութերի ստացում և հատկությունների ուսումնասիրություն:

• Ալյումասիլիկատային հիմքով նոր սերնդի լյումինաֆորների սինթեզ, լուսարձակման բարձր պայծառությամբ և երկարատևությամբ:

- Հոսքաջրերի՝ նավթի և նավթամթերքների խառնուրդներից, մաքրմանն ուղղված հետազոտություններ նոր բաղադրության ալյումասիլիկատային սորբենտների կիրառմամբ :
- Բարելավված ամրային հատկություններով կապակցող նյութի ստացում ՀՀ աղքատ գիպսային հանքերից: K, Ca, Fe, P պարունակող Հայաստանի բնական հումքից պարարտանյութերի ստացում:
- Cs, Rb, Sr և B-ի իզոտոպների նկատմամբ բարձր սորբցիոն ընտրողականությամբ օժտված հանքային և ածխային սորբենտների և իոնափոխանակիչների սինթեզ և ուսումնասիրություն:
- Լեռնային ապարներից և արհեստական սիլիկատներից անօրգանական պոլիմերների (փայլարների, ամֆիբոլային ասբեստների), նանոհաստության շերտավոր ջերմակայուն սիլիկատների ստացումը.
- Մոլիբդենիտային խտանյութերից հատուկ մաքրության նանոկառուցվածքի նյութերի տեխնոլոգիաների մշակում:
- Գազաֆազ շղթայական ռեակցիաների ազդեցության պայմաններում կարծ-բաֆազ անօրգանական նյութերի և միացությունների քիմիական հետերաֆազ փոխարկումներ (ՇՌԱ-մեթոդ):
- ՀՀ հանքային շրջանների և դաշտերի բնապահպանական գնահատման և մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի երկրաքիմիական համալիր որոնումների եղանակների մշակում:

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը _ տարեկան հաշվետվություն, հոդվածների տպագրում, արտոնագրերի ձևակերպում, նմուշների ստացում և այլն:

Տնօրեն՝ _____ (Նիկոլայ Կնյազյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 2
«27» 01 2015թ.
N Ե/12 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅԱՑԻՆ ՊԼԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ծրագրի
(ծրագրի անվանումը)

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը 109351.0 (դրամ)
1	Նոր տեխնոլոգիաների մշակումը, ֆունկցիոնալ նշանակության նոր նյութերի ստացում	Նոր նյութերի սինթեզ, հատկությունների ուսումնասիրում	Փորձարկումներ, Ֆիզ-քիմ հատկությունների ուսումնասիրում	հոդվածների տպագրում, արտոնագրերի ձևակերպում,	31.12.15	71078
2	Տեղական հումքից նանոկառուցվածքային նյութերի ստացումն և ուսումնասիրությունը	Սինթեզ, հատկությունների ուսումնասիրում	Համալիր վերամշակում	հոդվածների տպագրում, արտոնագրերի ձևակերպում	31.12.15	38273
Ընդամենը						109351.0

ՀՀ ԳԱԱ նախագահություն

Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

(ստորագրություն)
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ընդհանուր և Անօրգանական Քիմիայի Ինստիտուտ
(կազմակերպության անվանումը)

Տնօրեն՝ Ն. Կնյազյան
(անուն ազգանուն)

(ստորագրություն)

Հավելված 3
«27» 01 2015թ.
N _ե/12 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնության

ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ծրագրի
(ծրագրի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և ի դեմս Ընդհանուր և Անօրգանական Քիմիայի ինստիտուտ տնօրեն Նիկոլայ Կնյազյան
(կազմակերպության անվանումը) (անուն ազգանուն)
_____-ի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել

«27» 01 2015 թ. N _ե-12 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ __109351.0 (հարյուր ինը միլիոն երեք հարյուր հիսունմեկ հազար)_____ ՀՀ դրամ գումարի չափով:
(թվերով և բառերով)

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

Արարատ բանկ ԲԲՀ/հ 1510005175820100
ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

_____
(ստորագրություն)
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Կ. Տ.

Ընդհանուր և Անօրգանական Քիմիայի Ինստիտուտ
(կազմակերպության անվանումը)

Արգության փ.10, 2-րդ նրբ _____
(հասցեն)

հ/հ 247120046385 ԱՇԻԲ _____
(բանկային վավերապայմանը)

Տնօրեն՝ Ն. Կնյազյան _____
(անուն ազգանուն)

_____
Կ. Տ.

Հավելված 4
«27» 01 2015 թ.
N _Է/ 1[redacted] պայմանագրի

Գիտական ծրագրի նախահաշիվ

NN Ը/Կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	89165.0	17833.0	40124.25	62415.5	89165.0
2	տնտեսական և այլ ծախսեր	20186.0	4037.2	9083.7	14130.2	20186.0
3	ընդամենը	109351.0	21870.2	49207.95	76545.7	109351.0

Տնօրեն՝ _____ (_Նիկոլայ Կնյազյան_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (_Մարիամ Քոչարյան_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.